



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Ժ. — ՇՐՋԱՆ ԺԷ. 1884 ՏԱՐԻ ԺԷ. ՀՈԿՏԵՄ. 31.

ԿՐՈՆԱԿԱՆ

ԱՅՈՒԳԼՈՒԹ Է
1952 թ.

ԱՅԱՍՏԱՆԵԱՅՅՍ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՅԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

(Շ-բ-ն-ի. Աբ-բ-ր. Բ. Թ.)

ԳԼ. Բ.

Ս. Սահակ և Մեսրոպ Հայ դպրութիւնը ծագիւեցնելով Էին դրա-
յուած՝ երբ 413 թ. մեռաւ Վառաձապուհ 21 տարի խաչմու-
թեամբ և իմաստութեամբ թագաւորելուց յետոյ: Արուհեան
Վառաձապուհի ժառանգ Արտաշէսը մանուկ էր ուստի Ս. Սահակ
անձամբ գնաց Պարսից Յազկերտ թագաւորի մօտ և Անյուշ բեր-
դից Խոսրով Գ. ին հանել տալով՝ թագաւորեցրեց Հայաստանի վե-
րայ:

Խոսրով Գ. մի տարի հազիւ թագաւորեց և մեռաւ. իսկ Յազ-
կերտ իւր Շապուհ որդուն բոլոր արքայազնաց և փոքրանդի հայերի
հետ ուղարկեց Հայաստան: Նախարարները թէեւ չէին կամենում
Շապուհին թագաւորաւայել տալու տալ, բայց չէին էլ կարողա-
նում մերժել, որովհետեւ ներքին միութիւն չունէին (և Սահակ
հայրապետը իւր փեսայ Համազասպի մահուամբ օգիմէջ էր): Այս-
պէս Շապուհ անարգել Հայաստան մտնելուց յետոյ, ամեն ջանք

գործ զրեց հայերին ընտելացնել Պարսից աղանդին և սովորութեանցը — նախարարն ըլին որսորդութեամբ, խնջոյքներով և զուարճութեամբ յղփացնելով, և խնամութեան կապեր հաստատել տալով Պարսից հետ:

Շապուհ իւր Հայաստանում թագաւորութեան չորրորդ տարին լսելով իւր հօր մահը, իւր տեղը մի պարսիկ տեղակալ կարգելով շտապեց Պարսկաստան գնալ ուր և սպանուեց: Իսկ Հայոց նախարարները Ներսէս ձիւճրակացու առաջնորդութեամբ սպանեցին պարսիկ տեղակալին՝ որ հրաման էր առել Հայոց մեծամեծներին հետն առած Պարսկաստան գնալ: Վաւա՛ր թագաւորելով Պարսկաստանում, պարսիկ տեղակալի մահուան վրէժը լուծելու համար Յունաց հետ դաշնակցելով՝ երեք տարի շարունակ Հայաստանը որածութեանց և ասպատակութեանց ասպարէզ դարձրեց: Այս թշուառութեանց ժամանակ Ս. Սահակ տեսնելով որ անհնարին է Հայաստանի Պարսից բաժնում գործ շինել, գնաց 420 թ. Յունաց բաժինը այն տեղ ևս Հայ դպրութիւնը ծաղկեցնելու. սակայն Յունաց մեծամեծները ընդիմացան և Ս. Սահակ պարտաւորուեց Փոքր - Ասիոյ կուտակալ Անատոլին, Բէալոս կայսեր և Կոստանդնուպօլսոյ Ատափկոս պատրիարքին աղաչանաց թղթեր գրել, խնդրելով պատրիարքի միջնորդութիւնը կայսեր մօտ՝ որ թոյլ տայ Յունաց բաժնի Հայաստանում ևս հայ դպրութեամբ հայ մանուկները կրթելու: Այս թղթերը Ս. Սահակ յանձնեց Ս. Մեսրոպին և իւր թոռն Վարդանին Կոստանդնուպօլիս տանելու: Անատոլ Ս. Մեսրոպի աշակերտներից մեծագոյն մասը իրանց գլխաւոր Ղևոնդի հետ թողեց Մելիտինէ քաղաքում, յանձնելով տեղւոյն Ակափիոս եպիսկոպոսի խնամքին, իսկ Ս. Մեսրոպին և Վարդանին սակաւաթիւ աշակերտների հետ պատուով ուղարկեց Կոստանդնուպօլիս ուղեկցութեամբ Գերջանայ Գինթ եպիսկոպոսի:

Կոստանդնուպօլսում կայսրը և պատրիարքը սիրով ընդունեցին Մեսրոպին ու Վարդանին և առանձին թղթով արդարացնելով Յունաց մեծամեծների ընդգիմագրութիւնը, Ս. Սահակին մեղադրումէին, որ նա մինչև այն ժամանակ չէ կամեցել թղթով անգամ ծանօթանալ Յունաց հետ, և հայկական տառերի գիւտի համար գիմել է Ասորիներին, մինչդեռ Յունաստանում ծաղկած էին գիտութիւնն ու ճարտարութիւնը, և իւր իմաստութեամբ փայլումէր Ս. Յովհան Ոսկեբերան:

Կայսրը իւր թղթով յայտնումէր թէ, իրաւունք է տալիս որ Հայերը Կեսարիայ արքեպիսկոպոսի պէս Ս. Սահակին իրանց հովիւ ճանաչեն, հրամայել է իւր գործակալներին՝ որ նպաստեն Յուդայացի բաժնում ևս դպրոցներ հաստատելու արքունի ծախքով, և Ս. Մեսրոպին առաջին վարդապետի (Ակումիտ) իսկ Վարդանին՝ ստրատելատի իրաւունք է տուել: Իսկ Ատտիկոս շնորհակալ լինելով Ս. Սահակի բարեհամբաւութեան համար Հայոց աշխարհի պէս մի բարբարոս երկրում, յայտնումէր որ Ս. Մեսրոպին եկեղեցիատնիկոս է ձեռնադրել, իսկ բոլորքրիստոնեաների ազանգի ընդունել կամ մերժելը թողնումէր Ս. Սահակի կամքին:

Պարսից բաժնի հայ նախարարները Վաւաքի արշաւանքներից թշուառացած երկրին մի ելք գտնելու համար անդադար հրաւիրումէին Ս. Սահակին: Ս. Սահակ Հայ նախարարների հրաւերքը ընդունելով, Յուդայացի բաժնի դպրոցները և ուսման գործը յանձնելով Ս. Մեսրոպին և իւր Հմայեակ և Համադասպեան թոռներին, շտապեց Այրարատ՝ Վաղարշապատ քաղաքը. ժողովեց իւր մօտ նախարարներին ու մեծամեծներին և նոցա հաճութեամբ իւր թոռն Վարդանին և Սմբատ ասպետին ուղարկեց Պարսկաստան, որ խնդրեն Վաւաքից մոռանալ անցեալը, և Հայաստանի վերայ թագաւորեցնել Վաւաքապուհի Արտաշէս որդուն: Վաւաք ընդունեց Հայոց խնդիրը, և 422 թուին Արտաշէսին Արտաշիր անուամբ թագաւորեցրեց Հայաստանի վերայ: Ս. Սահակ նոյն թուին եկեղեցականների բարեկարգութեան համար Վաղարշապատու Չորրորդ ժողովը գումարեց, և ժողովի եպիսկոպոսների հաճութեամբ ընդհանրական թուղթ գրեց—եպիսկոպոսների, քորեպիսկոպոսների, քահանաների բարուք կեցութեան և պարտաճանաչութեան կանոններ սահմանելով, և նոցա՝ ու վանօրէից համար հասոյթներ հաստատելով:

Ս. Մեսրոպ, իւր Ղեռնդ ու Դան աշակերտներին թողնելով Սպարում, և Գերջանի Գինթ եպիսկոպոսին էլ տեղւոյն կրթութեան գործի հսկողութիւնը յանձնելով՝ նոյն եկաւ Այրարատ, և այն տեղից էլ անցնելով Գողթն գաւառը, տեղւոյն իշխանի ձեռնառութեամբ հետամուտ եղաւ ջնջելու հեթանոսական սովորութիւնները, որ քրիստոնէականի հետ խառնուելով՝ մի առանձին ազանգի կերպարանք էին ստացել. այնուհետեւ գնաց այդ ազանգի բնագաւառ Բաղասական աշխարհը, անխոնջ քարոզում և անդել՝

ներին հայածում էր: Գուգարաց ըզեշխի հրաւիրմամբ Գարգմանայ ձորերի կողմովը քարոզելով անցաւ Տաշրաց գաւառը և այն տեղից վերադարձաւ Ս. Սահակի մօտ:

Ս. Սահակ և Մեսրոպ հայ գպրութիւնը աւելի ևս ծաղկեցնելու և նորաբողբոջ գրականութիւնը հարստացնելու համար որոշեցին իրանց աշակերտներին ուղարկել զանազան քաղաքներ: Այսպէս, Յովսէփ Պաղնացուն և Եղնիկ Կողբացուն կամենումէին ուղարկել Եփեսոս, որ այն տեղի գրատանը եղած սուրբ հարց գրքերը թարգմանեն. սակայն Յովսէփ և Եղնիկ Կոստանդնուպօլիս գնացին, գիտենալով որ այն տեղ գիտութիւնն ու ճարտարութիւնը աւելի ծաղկած են. և վարժուելով հելլեն գպրութեան՝ ձեռնամուխ եղան թարգմանութեան: Յովսէփին և Եղնիկին հետեւեցին իրանց Կորիւն և Ղևոնդ ընկերները, իսկ Յովհան և Արձան, որ ուղղակի Կոստանդնուպօլիս պէտք է գնային՝ Կեսարիայում ուշանալով՝ փոքր ինչ անագան տեղ հասան:

Ս. Սահակ և Մեսրոպ ուսման սէրը այնպէս էին արծարծել Հայաստանում, որ ամեն որ կամենումէր գրագէտ դառնալ և մասն ունենալ հայ գրականութեան մէջ: Ս. Սահակ և Մեսրոպ գիտութեան բոցը այնպէս էին բորբոքել իրանց աշակերտների մէջ, որ ամեն մինը աշխատումէր գերազանցել իւր ընկերից. և եթէ մէկը իւր վարդապետի հրամանով էր պատրաստուում Կոստանդնուպօլիս գնալ, նորա ընկերը ինքնակամ շտապումէր իւր ընկերից առաջ ընկնել. և սքա բոլորը միասին կոչվումն անգրանիկ թարգմանիչներ: Այս թարգմանիչները Կոստանդնուպօլսից դեռ յետ չէին դարձել, երբ Սուրբ Սահակ կարգաւորեց եկեղեցական ժամակարգութիւնները սաղմոսերգութեամբ շարականներով աղօթքներով ու քարոզներով:

Նոյն իսկ այս ժամանակ Կոստանդնուպօլսոյ պատրիարքական Աթոռը բարձրացաւ Նեստոր, որ հերիտիկոսութեան մէջ ընկաւ և ասումէր, այլ է Աստուծուց և այլ է Ս. կոյս Մարիամից ծնուածը, որով սուրբ կոյսը ոչ թէ Աստուածածին, այլ մարգածին էր ընդունում: և այսպիսով Արգին Սուրբ երկու բաժանելով Սուրբ Երրորդութիւնը չորրորդութիւն էր դառնում: Նեստորի հերետիկոսութիւնը հերքելու համար 431 թուին ժողովուեցին Նիքսոս քաղաքը երկու հարիւր հայրապետներ, որոնք Կոստանդնուպօլսոյ պատրիարքական աթոռից վայր ձգելով՝ Նեստորին՝ նզովեցին նո-

րան և նորա աղանգը և խոստովանեցին Յիսուս Քրիստոս մի որդի Աստուծոյ իսկ սուրբ կոյս Մարիամին՝ Աստուածածին:

Այս ժողովին թէեւ Ս. Սահակ չըկարողացաւ մասնակցել, սակայն Աղէքսանդրոս՝ Կիւրեղ, Կոստանդնուպօլսի՝ Պրոկղոս և Մեխիմեոյ Ակակիոս արքեպիսկոպոսները իւրոյ իմանալով թէ Նեստորի համախոհ Թէոդորոս մոպսուեստացու և Դիոդոր տարսոնացու*) յարախառական գրքերը Նեստորի աշակերտներինց ոմանք բերել են Հայաստան՝ թղթով յայտնեցին Ս. Սահակին զգուշանալ այդ չար աղանգից. իսկ այս թուղթը ժողովի վեց յօդուած վճռի հետ բերին Հայաստան Յովսէփ Պարլացի, Յովհան Եկեղեցացի, Եղնիկ Կողբացի, Կորիւն և Արձան թարգմանիչները և յանձնեցին Ս. Սահակին՝ երբ նա Մեսրոպի հետ Տարօնոյ Աշտիշատումն էր: Իսկ Ս. Սահակ 435 թ. Աշտիշատի Բ. ժողովով՝ ընդունեց Եփեսոսի ժողովի վճիռը:

Եփեսոսի ժողովի վճռի հետ Կոստանդնուպօլսոյ Մաքսիմիանոս եպիսկոպոսի օգնութեամբ թարգմանիչները ուրիշ գրքերի հետ Հայաստան բերին Նոթանասնից թարգմանութեան հին Կտակարանի ու յունարէն գրած նոր Կտակարանի մի մի ընտիր օրինակներ: Սուրբ Սահակ և Մեսրոպ չքաւականանալով Սուրբ գրոց առաջին թարգմանութեամբ, իրանց թարգմանիչ աշակերտների հետ սկսեցին նորից թարգմանել Ս. գիրքը նոր ձեռք բերուած օրինակի համեմատ, և առաջին թարգմանիչ աշակերտներից յետոյ Մովսէս Խորենացուն ու նորա ընկերներին էլ ուղարկեցին Աղէքսանդրիա ուսանելու, որոնք թեթեւակի խուզարկելով Նզեսիայի գրատունը, Պաղէստինէով անցան Աղէքսանդրիա:

Այն ժամանակ երբ Ս. Սահակ Մեսրոպի և իրանց աշակերտների հետ թարգմանութեամբ և մանուկների կրթութեամբ էին զբաղուած՝ նախարարները հաւաքուեցին նորա մօտ՝ որ նորա հետ միասին բողոքեն Պարսից թագաւորին, խնդրելով վերջացնել

(*) Նեստորի աշակերտ Թէոդորիտոս իւր ուսուցչին արգարացնելու համար երեք գլխով մի գիրք էր գրել, հաստատել ջանալով Նեստորի ուղղափառութիւնը վկայութեամբ Դիոդոր տարսոնացու և Թէոդորոս Մոպսուեստացու՝ որոնք իրանց գրաւոր երկերով և առաքինի վարքով երկար ժամանակ յարգուած էին. (Պատմ. Եկեղ. Հ. Իգ. Փափաղ. հր. 286):

Արշակունի հարստութիւնը և մի պարսիկ իշխանով կառավարել
 Հայաստանը, գահընկէց անելով Արտաշէին՝ որ իւր անկարգու-
 թիւններով զզուացրել էր բոլորին: Ս. Սահակ նախատեսելով
 որ, Արշակունեաց անկմամբ Պարսիկները Հայաստանին բոլորո-
 վին տիրելուց յետոյ երկիրը աւերակ պէտքէ գարձենն նեղուած
 ժողովրդին հեշտութեամբ մաղդեղանց կրօնին դարձնելու՝—հա-
 մազեց նոցա յետ կենալ իրանց կործանիչ խորհրդից, սակայն
 երբ տեսաւ թէ նոքա յամառուած են, ասաց. «Ինչ քաւ լիցի
 իմ՝ մոլորուած ոչխարը մատնել, և վիրաւորուած ու հիւան-
 դացածը պատելու տեղ՝ գահալիժ անել: Որդեակներ, մի մտա-
 ծէք այդ խորհուրդը, և ձեր նախորդներից ոմանց նման ձեր բնիկ
 տէրերին փոխել մի աշխատէք: Ես ի՞նչպէս իմ ախտացած ոչ-
 խարը կրօնիս անակեմ՝ առողջ գաղանի հետ՝ որի առողջութիւնն է
 մեզ պատուհաս » : Նախարարները լսելով այս՝ միաբերան ասա-
 ցին. որովհետեւ դու մեզ հետ չըմիաբանեցիր Արտաշէին գահըն-
 կէց անելու, մենք ևս չենք կամենայ որ դու էլ մեզ հովուապետ
 լինիս: Ուստի Արծկէացի Սուրմակ անուամբ մի երէցի հետ գնա-
 ցին Պարսկաստան և չարախօսեցին թագաւորի ու Ս. Սահակի
 վերայ: Ս. Սահակի վերայ մեղադրանքը զօրաւոր կացուցանելու
 համար՝ ամբաստանեցին նորա մառն թէ նա կամենումէ որ Հա-
 յաստանում Պարսիկների տեղ Յոյները տէր լինին, թէ Անատոլի
 Հայաստան գալը և յանուն Թէոդոս կայսեր Թէոդոսուպոլիս քա-
 ղաք շինելը նորա խորհրդով էր, և իբրեւ փաստ յառաջ էին բե-
 րում: Ս. Մեսրոպի ու Վարդանի յանուն կայսեր, Ատտիկոս եպիս-
 կոպոսի և Անատոլ զօրավարի թղթերով Յունաստան գնալը:

Արտաշէր թագաւորն ու Ս. Սահակ Պարսից դուռը կանչուեցին.
 Արտաշէր՝ իւր վերայ ելած մեղադրանքի համար ի պատասխանի՝
 նախարարների մասին ասաց. «Դոքա ի բնէ սովոր են անարգել
 իրանց տէրէրին, միշտ իշխանաւորիս և տիրապետեաց են հանդիսա-
 ցած » : Երբ Սուրէն Պահլաւ իբրեւ ցեղակից հաւատացնումէր Սա-
 հակին ասելով. « Եթէ նախարարների հետ միաբանես, Պարսից
 թագաւորը քեզ մեծ պատուի կըհասցնի և քո թուռն Վարդանին՝
 թագաւորի զուգապատիւ իշխանութեամբ կըճոխացնի Հայաստա-
 նում » : Ս. Սահակ չըհրապուրուեց և պատասխանեց. « Ինչո՞ւ փա-
 ռասիրութեան և իշխանասիրութեան համար չարախօսեմ բն-
 կերիցս » :

Վաւմ գահընկէց արեց Արտաշին ու Ս. Սահակին և արգելեց Պարսկաստանում. Հայոց արքունեաց ու կաթողիկոսարանի ինչքը յարքունիս գրաւեց, Վեհմիհրշապուհ պարսկին Հայաստանի վերայ մարզպան նշանակելով, իսկ Սուրմակին՝ Հայոց կաթողիկոս, նախարարների հետ ուղարկեց Հայաստան. Այսպիսով 428 թուին կործանուեց Արշակունի հարստութիւնը և Հայաստանը բոլորովին ընկաւ Պարսից իշխանութեան տակ:

Սուրմակ իւր անվայել ընթացքով տարին չըլրացած իւր համախոհ նախարարներից հալածուեց և Պարսից հրամանով յազգէ յազգ Բղնունեաց եպիսկոպոս նշանակուեց: Ի պատասխանի նախարարների նոր կաթողիկոս խնդրելուն՝ Վաւմ կաթողիկոս նշանակեց Բրբիշոյ Ասորուն՝ որ զանազան գայթակղական գործեր կատարելուց յետոյ շահասիրութեամբ առգորուած՝ վախճանուած եպիսկոպոսների վիճակները յափշտակումէր: Բրբիշոյի արարքը ղղուացրեց նախարարներին, որոնցից ոմանք խնդրումէին Վաւմից դարձեալ Ս. Սահակին կաթողիկոսացնել, այլք հաւան էին ում որ Վաւմ կընշանակի, իսկ Անատոլ Յունաց ղօրավարը սպառնումէր որ, եթէ Պարսից բաժնի կաթողիկոսը իրան հաճելի չըլինի՝ մի ուրիշին կըկարգի կաթողիկոս յունական բաժնի վերայ:

Երկու կողման նախարարները առանձին, և եպիսկոպոսները Մեսրոպի հետ առանձին՝ սրտագամաւոր ուղարկեցին Պարսից Վաւմ թագաւորին կաթողիկոս խնդրելու. իսկ Վաւմ երկու կողմն էլ շահելու համար նմուէլ անուն մի անձի նշանակեց կաթողիկոս մտրդպանի հետ աշխարհի հարկերի և դատաստանական գործերին հսկելու, իսկ Ս. Սահակին ևս իրաւունք տուեց հայրապետութեան հոգեւոր գործերը հոգալու և նմուէլի առաջարկածները ձեռնագրելու. և հայրենի գիւղերից ու կալուածներից մի փոքր մասը Ս. Սահակին յետ դարձնելով թոյլ տուեց Հայաստան վերադառնալ, բազմամարդ ատենի առաջ առելով «երդմնեցնումեմ» քեզ քս հաւատով, հաւատարմութեամբ մնալ իմ ծառայութեան մէջ և ապստամբութիւն չըխարհել, իտրուելով Յոյների մոլոր հաւատակցութեամբ և պտտծառ չըգաւնալ՝ որ մենք Հայոց աշխարհի կորստեանը ջանանք մեր բարերար անունը չարաբար փախելով. իսկ Ս. Սահակ պառշաճ ձեռով և համեստ ձայնիւ սկսեց յանգիմանել պարսիկների կեղծաւորութիւնը ու քաղցրախնութիւնը, նպաստումով միտերած դաւնութիւնը երեւան հա-

նելով՝ յիշեցրեց իւր հաւատարիմ ծառայութիւնները և Պարսիկ ներքի ապերախութիւնը. և այս այնպիսի ազդու և պատկառելի ոճով, անվեհեր և համարձակ ճարտարախօսութեամբ՝ որ թագաւորի վերայ մեծապէս ազդեց:

Թագաւորը երբ կամենում էր Ս. Սահակին վարձատրել շատ արծաթներով, Ս. Սահակ չընդունեց, և Սուրէն Պահլավի ձեռքով խնդրեց՝ որ մարզպանները իրաւունք չունենան Հայոց նախարարութեան կարգը փոխել մէկին բարձրացնելով միւսին ստորացնելով, այլ նոյնը պահպանեն ինչպէս սահմանուած է Արտաշէլ թագաւորից, և ինչ ինչ պատճառով դատապարտեալ նախարարները ազատութիւն գտնելով՝ իրանց նախկին լրաւունքներին տիրանան: Վաւա՛ Ս. Սահակի բոլոր խնդիրները կատարեց և նորա թոռն Վարդանին Մամիկոնեան նախարարութեան տէր նշանակեց ու նմուէլի հետ 432 թ. ուղարկեց Հայաստան:

Նմուէլ կաթողիկոսութեան աթոռ ստանալուց յետոյ Բրբիշոյ յից էլ անցաւ, վասն զի Բրբիշոն միայն մեռած եպիսկոպոսների թեմերն էր յափշտակում, իսկ Նմուէլ Սուրմակի խորհրդով սկսեց կենդանիների վիճակներն էլ յափշտակել զըպարտելով նոցա որպէս արգելիչ արքունի հարկերը հաւաքելուն:

Նմուէլի օրինակին հետեւելով՝ եպիսկոպոսները սկսեցին միմեանց վիճակ յափշտակել, ամբաստանելով և իրանց գաւառի իշխանի ձեռքով Պարսից արքունիքում կասկածելի ցոյց տալով իրար: Թէև Հայաստանի հոգեւորական վիճակը սկսել էր այսպէս վատթարանալ, սակայն Ս. Սահակ չէր յուսահատւում այլ Մեսրոպի հետ անգաղար ուսուցանումէր քարոզելով Աւետարանը և աւելացնելով ու բարեկարգելով հայ դպրութեան ուսումնարանները: Ուր ուրեմն Ս. Մեսրոպին թողնելով Վաղարշապատի կաթողիկէում, ինքն գնաց Բագրևանդայ Ս. Յովհաննոս վանքը, որի մօտ, եփրատ գետում, մկրտուեց Տրդատ Հայոց զօրքի հետ:

Նմուէլ կաթողիկոսական իշխանութիւնը հինգ տարի անարժանութեամբ վարելուց յետոյ երբ մեռաւ, նախարարները հաւաքուելով Ս. Սահակի մօտ և խոստանալով յորգւոց որդի նորացեղից ընտրել կաթողիկոս, խնդրեցին հայրապետական իշխանութիւնը վարել թէ ըստ կրօնականին և թէ ըստ քաղաքականին: Ս. Սահակ չէր կամենում յանձնառու լինել, և պատմեց տեսիլը,

որով յայտնուած էր իրան թէ պէտք է բարձուի կաթուղիկոսութիւնը Ս. Լուսաւորչի ցեղից:

Ս. Սահակ խորին ծերութեան մէջ 51 տարի հայրապետական իշխանութիւն վարելուց յետոյ Բագրեւանդայ Բլուր գիւղում 438 թուին վախճանուեց, և Վարդանայ կին Գտորիկ, Երեմեայ սարկաւազապետի ու Ս. Սահակայ աշակերտների հետ՝ Ս. Սահակայ մարմինը փոխադրելով Տարօնոյ Մամիկոնեանց սեպհական Աշտիշատ գիւղը, այն տեղ թաղեց:

Ազգի հաճութեամբ Ս. Սահակին տեղակալ նշանակուած Ս. Մեսրոպ, վեց ամից յետոյ վախճանուեց. որի մարմինը թաղելու համար նախարարների մէջ տարաձայնութիւն ընկաւ, ոմանք կամենումէին իւր բնագաւառ Տարօնում թաղել, ոմանք Գողթն գաւառում, իսկ ոմանք էլ Վաղարշապատում. Վերջապէս Վահան Ամատունին, որ հաղարապետն էր աշխարհիս, տարաւ և թաղեց իւր Օշական գիւղում:

440 թուին Մեսրոպի յառաջագոյն յայտնած հաճութեամբ տեղակալեց իւր աշակերտ Վայոց ձորի Հոլոցիմ գիւղացի Յովսէփ. իսկ Մովսէս Խորենացին և իւր ընկերները, որոնք կրտսեր թարգմանիչներ են կոչուում՝ կրթութիւն ստանալուց յետոյ այցելելով Հռոմ, Աթէնք և Բիւզանդիոն, վերադարձան Հայաստան. և Ս. Սահակին ու Մեսրոպին վախճանուած գտնելով և տեսնելով որ Հայաստանը տակն ու վերայ է եղած Պարսից առօրատակութեան և նախարարների անմիաբանութեան երեսից ու իրանց ուսումն ու գիտութիւնը գնահատող չըլայ՝ ցրուեցին զանազան կողմեր ուղարկով իրանց վարդապետների մահն ու քարուքանդ հայրենիքը:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Դ. ԺՈՂՈՎ.

Ժողովի հաճութեամբ Ս Սահակ ընդհանրական թղթեր գրեց պատուիրելով եպիսկոպոսներին, որ նոքա վիճակի այցելու և հասարակաց հայր լինելով՝ պէտք է առանց ակնառութեան խնամարկեն Աստուծուց իրանց յանձնուած հօտը. պէտք է իւրաքանչիւր գաւառի և քաղաքի վերայ օրինաց նախանձաւոր և հաւատոյ վարդապետութեանը տեղեակ քորեպիսկոպոսներ (տեսուչներ, բարեկարգիչներ) նշանակեն, ժողովրդին խրատելու և քահանաների վերայ հսկելու. Պատուիրումէ եպիսկոպոսներին զինուորներին և սղէտներին և մերձաւոր ազգականներին հոգեւորական կոչումն չըտալ շնորհուկս առնելով: Ս. Սահակ բացի ընդհանրական թղթից, ժողովի որոշմամբ եպիսկոպոս-

Ների ու քորեպիսկոպոսների համար 10 յօդուած, իսկ քահանայի համար 23 յօդուած կանոններ էլ սահմանեց.

ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԵՒ ՔՈՐԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

Ա. Իմաստունները միայն քորեպիսկոպոս ձեռնադրուեն:

Բ. Քորեպիսկոպոսները հսկեն՝ որ սուրբ սեղանը զարդարուած և նորա առաջ ճրագը վառուած պահուի:

Գ. Սեղանի մօտ կամ աւանդատանը լինի մկրտութեան աւաղանը:

Դ. Եկեղեցում անխափան կատարուեն սահմանեալ սաղմոսերգութիւնները:

Ե. Միշտ հսկեն (եպիսկոպոսներն ու քորեպիսկոպոսները) եկեղեցու ժամերգութեան վերայ և իւրաքանչիւր տարի իրանց թեմերը այցելեն հարկաւոր ուղղութիւնները մուծանելու համար:

Զ. Եթէ տեսնեն քահանաներին իրանց պաշտամանց մէջ ծղլլ, պատժեն:

Է. Եթէ եկեղեցականների մէջ արեցող, անառակ և պղերգներ գրտնեն՝ եկեղեցական պաշտօնեաների կարգից հեռացնեն:

Ը. Զգուշանան որ պոռնկորդիներն ու կրկին ամուսնացեալները հոգեորական չըդառնան:

Թ. Զըհամարձակուեն ժողովրդին կեղեքել:

Ժ. Իրանց հօտին օրինակ լինելու համար պէտքէ համեռտ գնացք և ուղիղ վարք ունենան:

ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

Ա. Քահանաները տգէտ և ցոփ չըլինին:

Բ. Իրանց մանուկներին ուսման տան:

Գ. Գլխաւոր քահանան միշտ, իսկ ուրիշները շաբաթ առ շաբաթ կենան եկեղեցում:

Դ. Մկրտութեան ժամանակ կին սպասաւորութիւն չանի:

Ե. Քահանայ լինելիս սարկաւազները մկրտութիւն չանեն:

Զ. Պատարագիչ քահանան եկեղեցում, գլխաւոր քահանայի տանը մնայ:

Է. Գլխաւոր քահանան եկեղեցական հասոյթից կրկին բաժին ստանայ:

Ը. Իւրաքանչիւր տարի զատկից յետոյ քահանաները հայրապետից ստանան սուրբ մեռօն:

Թ. Սեղանի վարագոյրը հարսանեաց առաջատ և սուրբ սկիհը ըմպելեաց անօթ տալ համարձակող քահանան կարգալոյծ լինի:

Ժ. Քահանայքը աշխարհականների տանը ծառայող չըդառնան:

ԺԱ. Քահանաների գերեզմանները իրանց ժողովրդոց հանգստարանում լինին և ոչ թէ եկեղեցում կամ սուրբ տեղերում:

ԺԲ. Քաճանաները սրբութիւնը միմիայն հիւանդների համար տուն տանեն:

ԺԳ. Ժողովրդին չարութիւնից զգուշացնեն իսկ անուղղաներին պատուհասեն:

ԺԴ. Անչափահասներին չըպսակեն:

ԺԵ. Նոյնպէս չափահասներին էլ չըպսակեն՝ եթէ նոքա միմեանց հաւան չեն:

ԺԶ. Զգուշութեամբ քննեն որ խարդախութեամբ կամ ծնողների բռնութեամբ չըլինի պսակը:

ԺԷ. Սիրով պաշտօն կատարեն:

ԺԸ. Եթէ գիտենան թէ մէկը բան է կերել՝ կամենումէ հաղորդուել՝ չըհաղորդեն:

ԺԹ. Քաճանաների համար եկեղեցուն տրուած տուրքը աշխարհականները չըհամարձակուեն իրանց մէջ բաժանել:

Ի. Եկեղեցու հասանելիբը, որ նախնեաց սահմանադրութեան համեմատ աշխարհականները սովոր են տալ քաճանաներին, զուր չըփչացնեն:

ԻԱ. Քաճանայք թոյլ չըտան ննջեցեալների վերայ արբեցութիւն կամ սուգ ու կոծ անել:

ԻԲ. Քաճանաները ժողովրդեան յանցաւորներին առանց քննութեան չըմերժեն, և ուրիշ քաճանայի ժողովրդին չըպատուհասեն:

ԻԳ. Կրօնաւորներն ու վանականները աշխարհականների դործին չըթառնուեն, այլ միշտ առանձնացած կեանք ունենան:

ԵՓԵՍՈՍԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ 431. Թ.

Ա. Զընդունել ի հաղորդակցութիւն եկեղեցւոյ այն եպիսկոպոսներին, որոնք չեն ընդունիլ Եփեսոսի տիեղերական ժողովը:

Բ. Զընդունել այն եպիսկոպոսներին՝ որոնք նեստորի հերետիկոսութեան հետեոյ կըլինին:

Գ. Նեստորականներից դատապարտուած եկեղեցականներին ընդունել ի հաղորդակցութիւն եկեղեցւոյ:

Դ. Նեստորականներից դատապարտուած եկեղեցականներին ընդունել ի հաղորդակցութիւն եկեղեցւոյ:

Ե. Կեղեւտիոսեան հերետիկոսների *) համախոհներին մերժել եկեղեցու հաղորդակցութիւնից:

(*) Կեղեւտիոսն էր աշակերտ եւ քարոզիչ մոլորութեան Պեղագիտի անդղիացւոյ, որ դիպիւով Հռովմ եւ Վիրիկէ եւ իրան չափազանց խստակրօնութեան տալով՝ աշխատումէր որ մարդիկ հետեւեն իրան, ուր ուրեմն մոլորութեան մէջ ընկաւ եւ համարելով թէ մարդս անձնիշխան է առաքինութեան ծայրը հասնել, Նա Սուսմէր Ս. Թէ Ս. Դամ մահկանացու ստեղծուեց եւ եթէ չըմեղանչեր էլ, պէտքէ

Զ. Նոցա, որոնց նեստոր արդարացրել է, դատապարտել:

Է. Որոնք չեն ընդունել ժողովի կանոնները եթէ հոգեորական են՝ զրկուեն աստիճանից, եթէ աշխարհական են՝ անհաղորդ մնան:

(Կըլար-նու-ի) .

Յ. Վ. Մ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԿԵՆՏՐՕՆԵՐԸ.

Փ Ա Ր Է Զ.

(Շ-ր-ն-ի-ն Կ-ր-դ Բ-ն .)

Միայն ծանօթանալով Փարիզի բնակիչների վերե յառաջ բերած թուերի չափազանց աճելութեան հետ, մենք կարող ենք հասկանալ, թէ այս աճելութիւնը պէտք է ստիպէր Փարիզի քաղաքական վարչութեանը նորանոր միջոցներ որոնել ահագին քաղաքի մէջ բարեկարգութիւն և կեանքը ապահովելու համար: Եւ ստուգիւ բնակիչների աճելութեամբ մենք տեսնումենք Փարիզումը նոյնպէս աճելութիւնը քաղաքական բիւզժետի մինչև չափազանց մեծ քանակութեան:

Այժմեան Փարէզ քաղաքի բիւզժետը արդէն աւելի է Եւրոպայի շատ թագաւորութեանց բիւզժետներից և ներկայացնումէ տնտեսական և սոցիալական (հասարակական) մտքով, շատ կրթական արժանի ոչ միայն ուշադրութեան, այլ և ընդարձակ ուսումնասիրութեան երեւոյթ:

Որովհետև մենք ի նկատի ունենով մեր յօդուածի սահմանափակ շրջանակը, կարող ենք ծանօթացնել մեր ընթերցողներին Փարիզի բիւզժետի հետ միայն շատ հարեանցի, ուստի մենք նախապատու ենք համարում այս գէպքում ընթանալ նոյն իսկ ճանապարհով, որով ընթացել ենք վերեւումը, խօսելով Փարիզի բնակիչների վերայ, Ակզբում մենք կըտանք մեր ընթերցողներին ընդհանուր հասկացողութիւն քա-

մեռնէր. Բ. թէ Ազամի մեղքը միայն իրան վնասեց եւ ոչ մարդկութեան. Գ. թէ Մովսէսի օրէնքը Քրիստոսի տեստարանին հաւատար՝ մարդկանց առաջնորդումէ դէպի յաւիտենից փրկութիւն. Դ. թէ Քրիստոսից առաջ մարդիկ մեղքի տակ չէին. Ե. թէ հորածին մանուկները պէն վիճակում են՝ որի մէջ էր Ազամ՝ նախ քան պատուիրանադանցութիւնը. Զ. թէ Մարգիկ չեն մեռնում Ազամի յանցանոցն ի պատուհաս. ինչպէս եւ Քրիստոսի յարութեան համար էլ յարութիւն չեն տունիլ. Է. թէ Մարգ ծնվումէ առանց մեղքի եւ եթէ կամենայր՝ հեշտութեամբ կարող է հնազանդել Աստուածային պատուիրանքին. (Եկեղ. Պատմ. փառ. եր. 221 — 223) .